ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2026 թվականի N 153-Լ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 18-ի տասնմեկերորդ նստաշրջանի արտահերթ երկրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին համաձայնություն տալու մասին.

2) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող նրբանցքն անվանակոչելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԻՄԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍԵԴԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 18
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2026 թվականի N 154-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2027 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության 2027 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Համայնքային փողոցների ասֆալտապատում» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտին (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԻՄԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍԵԴԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 18
ք. Աբովյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

Հ Ա Յ Տ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	**Համայնքային փողոցների ասֆալտապատում** **Աբովյան համայնքի** **Աբովյան քաղաքի** Վահագն Թումասյանի անվան մարզահամալիրի հարակից փողոցների, Զորավար Անդրանիկի պողոտայից դեպի Արցախի փողոց ճանապարհահատվածի կառուցում և Արցախի փողոցի **Առինջ գյուղի** Ա թաղամասի 7-րդ փողոցի, Բ թաղամասի 8-րդ փողոցի և Պարույր Սևակի թաղամասի 20-րդ փողոցի 2-րդ փակուղու **Արամուս գյուղի** 5-րդ փողոցի մասնակի՝ Զրմուղի փողոցից մինչև բնակավայրի վերջնամաս ընկած հատվածի, Զրմուղի փողոցի 1-ին փակուղու մասնակի հատվածի և Ազատամարտիկների խճուղու 1-ին փակուղու **Բալահովիտ գյուղի** 1-ին թաղամասի 1-ին փողոցի մասնակի **Գեղաշեն գյուղի** 2-րդ թաղամասի 1-ին փողոցի մասնակի **Գետարգել գյուղի** 6-րդ փողոցի, 7-րդ փողոցի և 3-րդ փողոցի 2-րդ նրբանցքի **Կաթնաղբյուր գյուղի** 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի և 6-րդ փողոցի 1-ին փակուղու **Կամարիս գյուղի** 9-րդ փողոցի մնացած հատվածի և 8-րդ փողոցի՝ թիվ 1 հասցեից մինչև թիվ 18 հասցե ընկած հատվածի՝ ներառյալ մայթերի **Մայակովսկի գյուղի** 6-րդ փողոցի **Պտղնի գյուղի** 4-րդ և 10-րդ փողոցների **Վերին Պտղնի գյուղի** գերեզմանատան ներքին ճանապարհի բարեկարգման և **ասֆալտապատման աշխատանքներ:**
Մարզ	Կոտայք
Համայնքը /համայնքները	Աբովյան համայնք Մասնակից բնակավայրեր՝ **Աբովյան, Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովսկի, Պտղնի, Վերին Պտղնի**
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Աբովյան բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից–16 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 36 կմ Առինջ բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 12 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 45 կմ

	Արամուս բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 21 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 42 կմ Բալահովիտ բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից –15 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 40 կմ Գեղաշեն բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 24 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 45 կմ Գետարգել բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 15 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 42 կմ Կաթնաղբյուր բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 22 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 40 կմ Կամարիս բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 23 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 45 կմ Մայակովսկի բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 22 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 43 կմ Պտղնի բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 12 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 41 կմ Վերին Պտղնի բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից – 12 կմ Հեռավորությունը մարզկենտրոնից – 42 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Համայնքի՝ 99 568 մարդ Ծրագիրն իրականացնող բնակավայրի՝ Աբովյան-66956 մարդ, Առինջ-8640 մարդ, Արամուս-4477 մարդ, Բալահովիտ-4416 մարդ, Գեղաշեն-4817 մարդ, Գետարգել – 1005, Կաթնաղբյուր-750 մարդ, Կամարիս-2543 մարդ, Մայակովսկի-2484 մարդ, Պտղնի-2167 մարդ, Վերին Պտղնի-1313 մարդ
Սահմանամերձ համայնք/բնակավայր	---
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	---
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Համայնքը ունի գլխավոր հատակագիծ՝ հաստատված 13.08.2024 թվականի N 111-Ն որոշմամբ
Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝	Աբովյան համայնքում գործում է ջրամատակարարման և ջրահեռացման կենտրոնացված համակարգ: Ջրամատակարարման համակարգը մասնակիորեն վերանորոգվել է, ջրահեռացման համակարգում կան զգալի ներդրումների կարիք: Աբովյան համայնքում ջրամատակարարումը իրականացվում է 17 ժամ տևողությամբ:

- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, **- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,** **- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,** **- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ**	Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերից Գեղաշենում և Կամարիսում ջրամատակարարումը իրականացվում է հորատման միջոցով առաջացած ջրից, իսկ մնացած բնակավայրերում օգտվում են կենտրոնացված ջրամատակարարման ցանցից: Բնակավայրերում օգտվում են կենտրոնացված ջրահեռացման համակարգից, բացի Գետարգել և Բալահովիտ բնակավայրերից: Աբովյան համայնքի տարածքը (ներառյալ բնակավայրերը) գազաֆիկացված է 95 %-ով: Համայնքն ունի ոռոգման ցանցի վերականգնման խնդիրներ, քանի որ բնակավայրերում առկա են գյուղատնտեսական նշանակության հողեր: Աբովյանում փողոցային լուսավորությունն առկա է համայնքի գերակշռող մասում, կենտրոնական փողոցները լուսավորված են էներգախնայող լուսատուներով: Բնակավայրերում առկա են լուսավորության համակարգերի անցկացման խնդիրներ, որի մեջ առկա են էներգախնայող լուսատուների ձեռք բերման խնդիրը:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ասֆալտապատման նախագծերը կենսական դեր են խաղում ենթակառուցվածքների պահպանման, անվտանգության ապահովման, մատչելիության տեղաշարժման բարելավման, տնտեսական զարգացմանն աջակցելու և բնապահպանական խնդիրների լուծման գործում: Դրանք էական ներդրումներ են համայնքների երկարաժամկետ ֆունկցիոնալության, անվտանգության և գրավչության համար: Ասֆալտապատման նախագծերն աջակցում են տնտեսական զարգացմանը՝ բարելավելով առևտրային տարածքների հասանելիությունը և ընդլայնելով տրանսպորտային ցանցերը, բարեկարգ ճանապարհները և ավտոկայանատեղերը կարևոր նշանակություն ունեն բիզնեսի համար՝ հեշտացնելով հաճախորդների, առաքումների և աշխատակիցների տեղաշարժը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Ծրագրային հայտը բխում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներից և այն կընդգրկվի համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարության մեջ: Ծրագրի իրականացման նպատակն է Աբովյան համայնքում ունենալ հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, համայնքը դարձնել ավելի գրավիչ ներդրողների համար, ապահովել համայնքի շուրջ 99 568 մարդու կենսամակարդակի բարձրացումը: Լավ ասֆալտապատված մակերեսը նպաստում է ավելի անվտանգ փոխադրմանը՝ նվազեցնելով անհարթ կամ վնասված

	ճանապարհների կամ անցուղիների հետևանքով առաջացած վթարների ռիսկը:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Կազմել նախագծանախահաշվային փաստաթղթեր: Հիմնանորոգել Աբովյան համայնքի **Աբովյան քաղաքի** Վահագն Թումասյանի անվան մարզահամալիրի հարակից փողոցների *(երկարություն 857մ, լայնություն 7մ),* Ջորավար Անդրանիկի պողոտայից դեպի Արցախի փողոց ճանապարհահատվածի կառուցում և Արցախի փողոցի հիմնանորոգում *(Ջորավար Անդրանիկից դեպի Արցախի փողոց ընկած հատվածը 810 մետր երկարությամբ և 12 մետր լայնությամբ, Արցախի փողոցը 1500 մետր երկարությամբ և 14 մետր լայնությամբ)* **Առինջ գյուղի** Ա թաղամասի 7-րդ փողոցի *(երկարությունը 300մ, լայնությունը 6 մ, մակերես 1800քմ.),* Բ թաղամասի 8-րդ փողոցի *(երկարություն 270մ, լայնություն 6, մակերես 1620քմ.)* և Պարույր Սևակի թաղամասի 20-րդ փողոցի 2-րդ փակուղու *(երկարություն 220մ, լայնություն 6 մետր, մակերես 1320 քմ)* **Արամուս գյուղի** 5-րդ փողոցի մասնակի՝ Ջրմուղի փողոցից մինչև բնակավայրի վերջնամաս ընկած *հատվածի (երկարություն 225մ, լայնություն 9մ, մակերես 675քմ.*), Ջրմուղի փողոցի 1-ին փակուղու մասնակի *հատվածի (երկարություն 112մ, լայնություն 4մ, մակերես 448քմ)* և Ազատամարտիկների խճուղու 1-ին փակուղու *(երկարություն 51մ, լայնություն 4մ, մակերես 204քմ.)* **Բալահովիտ գյուղի** 1-ին թաղամասի 1-ին փողոցի մասնակի *(երկարություն 285մ, լայնություն 6մ, մակերես 1710 քմ.)* **Գեղաշեն** 2-րդ թաղամասի 1-ին փողոցի մասնակի *(երկարություն 600մ, լայնություն 4.5մ, մակերես 2700 քմ.)* **Գետարգել գյուղի** 6-րդ փողոցի *(երկարություն 125մ, լայնություն 5.8մ, մակերես 725քմ.)*, 7-րդ փողոցի *(երկարություն 107 մ, լայնություն 5.9մ, մակերես 631.3 քմ)* և 3-րդ փողոցի 2-րդ նրբանցքի *(երկարություն 76.5մ, լայնություն 5մ, մակերես 382.5քմ.)* **Կաթնաղբյուր գյուղի** 3-րդ փողոցի 1-ին նրբանցքի *(երկարություն 158մ, լայնություն 6մ, մակերես 948 քմ.)* և 6-րդ փողոցի 1-ին փակուղու *(երկարություն 60մ, լայնություն 6մ, մակերես 360քմ.)* **Կամարիս գյուղի** 9-րդ փողոցի մնացած հատվածի *(երկարություն 220մ, լայնություն 5մ, մակերես 1100քմ.)* և 8-րդ փողոցի՝ թիվ 1 հասցեից մինչև թիվ 18 հասցե ընկած հատվածի՝ ներառյալ մայթերի *(երկարություն 360մ, լայնություն 5մ, մակերես 1800քմ.)* **Մայակովսկի գյուղի** 6-րդ փողոցի *(երկարություն 300մ, լայնություն 6մ, մակերես 1800քմ.)* **Պտղնի գյուղի** 4-րդ *(երկարություն 100մ, լայնություն 5մ, մակերես 500քմ.)* և 10-րդ փողոցների *(երկարություն 370մ, լայնություն 5մ, մակերես 1850քմ.)* **Վերին Պտղնի գյուղի** գերեզմանատան ներքին ճանապարհի *(երկարություն 289մ, լայնություն 6մ, մակերես 1734քմ.)* բարեկարգման և **ասֆալտապատման աշխատանքներ:**

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման արդյունքում կունենանք բարեկարգ փողոցներ, ինչը կներառվի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ցանկում: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների՝ ճանապարհների, արժեքը կավելանա ծրագրի արժեքի չափով: Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Համայնքի փողոցների ասֆալտապատման արդյունքում ՝ 99568 բնակիչներ, որը կազմում է համայնքի բնակչության 99%-ը, կունենան հիմնանորոգված ճանապարհներ, կբարձրանա բնակչության տեղաշարժի հարմարավետության մակարդակը: Ծրագրով նախատեսված ծախսերը հանդիսանում են կապիտալ բնույթի: Վերանորոգվող ճանապարհները գլխավոր են, որոնք կից են դպրոցներին և բնակեցված թաղամասներին:
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացքում մոտավոր կստեղծվի 300 ժամանակավոր աշխատատեղեր:
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ 11 742 510.0 դրամ*

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝*	7 894 393.0	8 830 542.2	113.3
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	5 942 510.0	5 862 481.1	98,7
- Սեփական եկամուտներ	3 422 902.4	3 342 308.2	97.7
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1 851 883.0	2 968 068.1	160.3
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	11 742 510.0	8 090 865.5	68.3
- Վարչական բյուջեի ծախսեր	5 942 510.0	5 608 076.0	94.4
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	5 800 000.0	2 485 789.4	42.8
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, *որից՝*	5 800 000.0	2 482 789.4	42.8
- ճանապարհաշինություն	2 922 000.0	1 593 752.5	54.5
- վառելիք և էներգետիկա	145 000.0	76 644.6	52.2
- փողոցային լուսավորություն	152 000.0	17 547.1	11.5
- գյուղատնտեսություն	102 915.4	53 623.0	52.1
-կրթություն	1 358 699.9	185 498.6	13.7
-շրջակա միջավայրի պաշտպանություն	416 392.0	146 676.1	35.2

- ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	496 000.0	291 712,7	58.8
- հանգիստ, մշակույթ և կրոն	209 992.7	118 334.8	57.2

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

14 373 500.0 հազար դրամ

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	8 310 742.1
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	6 456 000.0
- սեփական եկամուտներ	5 678 103.0
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1 854 742.1
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	14 383 500.0
- Վարչական բյուջեի ծախսեր	6 456 000.0
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	7 927 500.0
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից՝*	7 927 500.0
- ճանապարհաշինություն	4 550 119.9
- փողոցային լուսավորություն	171 157.8
- ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	292 500.0
- շրջակա միջավայրի պաշտպանություն	818 322.3
- հանգիստ, մշակույթ և կրոն	771 799.9
- կրթություն	803 500.0
-գյուղատնտեսություն	156 300.0
-վառելիք և էներգետիկա	190 600.0

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

Համայնքը դեռևս չունի հաստատված միջնաժամկետ ծախսային ծրագիր (2026-2028 թվականների համար)

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ 8 697 785.0 դրամ:

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ 8 908 401.0 դրամ:

	Ծրագրի իրականացման տարի	Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝	8 908 401.0	9 186 370.0
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	7 408 401.0	7 686 370.0
- Սեփական եկամուտներ	3 880 296.8	3 958 268.8
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1 500 000.0	1 500 000.0

Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝	8 648 435.0	8 908 401.0
- Վարչական բյուջեի ծախսեր	7 148 435.0	7 408 401.0
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	1 549 350.0	1 500 000.0
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝	12 128 500.0	11 875 600.0
- ճանապարհաշինություն	3 669 500.0	4 036 450.0
- ջրամատակարարում	307 500.0	338 250.0
- փողոցային լուսավորություն	235 000.0	258 500.0
- գյուղատնտեսություն	205 000.0	248 054.0
-բնակարանային շինարարություն	511 250.0	562 875.0
-շրջակա միջավայրի պաշտպանություն	794 500.0	873 950.0
Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝ */ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/*	1 500 000.0	1 500 000.0
- ճանապարհաշինություն	754 500.0	776 240.0
- ջրամատակարարում/ջրահեռացում	184 500.0	202 950.0
- փողոցային լուսավորություն	94 000.0	113 740.0
- գազամատակարարում	82 000.0	99 220.0
- նախադպրոցական հաստատություններ	385 000.0	307 850.0
- հասարակական շենքեր	0,0	0,0
- գույքի, տեխնիկայի ձեռքբերում	0,0	0,0

Հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրում	Նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը 97.7 %:
Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիայի	Համայնքի 2026 թվականի բյուջետային մուտքերը՝ ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կազմելու է 7 576 000.0 հազար դրամ, ֆոնդային մասով նախատեսվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախս՝ 7 756 500.0 հազար դրամի, որից 292 500.0 հազար դրամը նախատեսված է ընդհանուր բնույթի ծառայությունների, 4 550 119.9 հազար դրամը՝ ճանապարհա-շինության, 818 322.3 հազար դրամը՝ շրջակա միջավայրի

գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ-ներով	պահպանության և աղբահանության, 171 157.8 հազար դրամը՝ փողոցների լուսավորության, 771 799.9 հազար դրամը՝ հանգստի և սպորտի ծառայությունների, 803 500.0 հազար դրամը՝ նախադպրոցական հիմնարկների հիմնանորոգման, 190 600.0 հազար դրամը՝ գազատարների կառուցման, 156 300.0 հազար դրամը՝ ոռոգման համակարգի վերանորոգման, 10 000.0 հազար դրամը՝ բնակարանային տնտեսության ոլորտի համար:
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ **- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 23 146 588 դրամ,** **- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 1 388 795 դրամ,** **- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 11 573 294 դրամ,** **- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 6 943 976 դրամ,** **ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ 785 935 դրամ**	1 201 167 988 *դրամ (100%)*
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*840 817 591.6 դրամ (70%)*
Այլ ներդրողներ	---
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը ապրիլ 2027թ. Տևողությունը՝ 2027թ. ավարտ
Ծրագրի ծախսերը	Կից ներկայացվում է տեխնիկական բնութագիրը:
Ամսաթիվ	*18 սեպտեմբեր 2026թ.*

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Մերուժան Մելիքսեթյան

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը՝ m.m.meliksetyan@mail.ru, +374 93 733007

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

Կ. Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2026 թվականի N 155-Ա

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆՐԲԱՆՑՔՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, «Աշխարհագրական անվանումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող նրբանցքն անվանակոչել՝ «համայնք Աբովյան, գյուղ Պտղնի, 24-րդ փողոցի 1-ին նրբանցք»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -16 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԻՄԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՍԵԴԱ ԱՆՏՈՆՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ


ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 18
ք. Աբովյան


0304
0305
0306
0307
0301
0302
0337
0338
0532
0528
0529
0530
0537
0516
0524
0122
0123
0124
0526
0128